ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/104/2026

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **13 հուլիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի 2026 թվականի հուլիսի 13-ին ընդունելով «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության նախագահ Սամվել Սարգսի Կարապետյանի կողմից կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի 2026 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/104/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամների 2026 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրերն Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի մարտի 24-ին և 30-ին թիվ 01/814/1-2026 ծանուցումը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ էլեկտրոնային փոստով, ուղարկվել է Սամվել Կարապետյանի՝ samvel.karapetyan@strongarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև վերջինիս պաշտոնական էլեկտրոնային փոստի՝ [redacted] հասցեին՝ տեղեկացնելով Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության մասին, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հայտարարագիրը լրացնել և ներկայացնել Հանձնաժողով: Սամվել Կարապետյանը ծանուցվել է նաև, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 10:00-ին, ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել էլեկտրոնային փոստով Սամվել Կարապետյանի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, և հիշյալ ժամկետում չի ներկայացվել Հայտարարագիրը՝ թիվ 01/814/1-2026 ծանուցումը 2026 թվականի ապրիլի 6-ին փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով ուղարկվել է Սամվել Կարապետյանի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով:

Նշված ծանուցումը 2026 թվականի ապրիլի 13-ին տեղադրվել է հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am) և ուղարկվել է Սամվել Կարապետյանի էլեկտրոնային փոստի հասցեներին, որից հետո Սամվել Կարապետյանը օրենքի ուժով 2026 թվականի ապրիլի 23-ին համարվել է պատշաճ ծանուցված: Սակայն, ծանուցված համարվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Սամվել Կարապետյանի կողմից Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2026 թվականի մարտի 25-ին Սամվել Կարապետյանի ներկայացուցիչ Արամ Վարդևանյանը Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիմում-միջնորդություն, որով վերջինս հայտնել է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ՝ նաև Դատարան) 2026 թվականի մարտի 14-ի թիվ ՀԿԴ/0194/06/25 որոշմամբ բավարարվել է ՀՀ ֆինանսական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մախսանենգությունների քննության գլխավոր վարչության առաջին վարչության պետի տեղակալ Սպարտակ Պողոսյանի միջնորդությունը և թիվ 83133225 քրեական վարույթով մեղադրյալ Սամվել Կարապետյանի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառված տնային կալանքի ժամկետը երկարաձգվել է մեկ ամիս ժամկետով: Դատարանի որոշմամբ նաև արգելվել է, ի թիվս այլնի, ունենալ նամակագրություն և հեռախոսային խոսակցություններ, օգտվել հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց:

Միաժամանակ, ներկայացուցիչը նշել է, որ Դատարանի կողմից կիրառված խափանման միջոցի շրջանակներում սահմանված՝ հաղորդակցության բոլոր ձևերից օգտվելու արգելքը (ներառյալ՝ հեռախոսային խոսակցությունները,

համակագրությունը, ինչպես նաև փոստային առաքանուց օգտվելու հնարավորությունը) իր բնույթով և ծավալով առաջացնում է համապարփակ սահմանափակում, որը գործնականում բացառում է հայտարարագրման գործընթացի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, ճշգրտման և վերլուծության իրականացումը և դրա լրացման հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Արամ Վարդևանյանը խնդրել է Հանձնաժողովին ճշված հանգամանքները դիտարկել որպես հիմք՝ Հայտարարագիրը լրացնելու համար լրացուցիչ ժամկետ տրամադրելու տեսանկյունից, ինչպես նաև, հնարավորության դեպքում, դիմել նախաքննություն իրականացնող մարմին՝ Հայտարարագիրը ներկայացնելը կազմակերպելու, սահմանափակումների ժամանակավոր վերացմանն ուղղված գործողություններ ձեռնարկելու նպատակով:

1.4 Սամվել Կարապետյանի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ վերոնշյալ դիմում-միջնորդությանն ի պատասխան՝ Հանձնաժողովը 2026 թվականի ապրիլի 3-ի թիվ 01/858-2026 գրությամբ հայտնել է, որ չունի օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու ժամկետը երկարաձգելու լիազորություն, հետևաբար չի կարող իր հայեցողությամբ փոփոխել կամ կասեցնել այդ պարտավորության կատարման համար օրենքով սահմանված ժամկետները: Հանձնաժողովն առաջարկել է անհրաժեշտ տվյալների ստացումն ու ճշգրտումը կազմակերպել Սամվել Կարապետյանի կողմից տրված համապատասխան լիազորագրի հիման վրա՝ լիազորված անձի, ինչպես նաև հաշվապահների, ֆինանսական կառավարման պատասխանատուների կամ այլ մասնագետների ներգրավմամբ: Միաժամանակ, Հանձնաժողովն առաջարկել է հայտարարագրման էլեկտրոնային համակարգ մուտք գործելու և համապատասխան տվյալները լրացնելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ դիմել վարույթն իրականացնող մարմնին, ինչպիսի միջնորդությունը մերժվելու դեպքում Հանձնաժողովը պատրաստակամ է քննարկել ստեղծված իրավիճակում հնարավոր հետագա լուծումները, այդ թվում՝ հայտարարագիրը թղթային եղանակով ներկայացնելու հնարավորությունը:

1.5 2026 թվականի մայիսի 25-ին պատշաճ ծանուցված Սամվել Կարապետյանի բացակայությամբ կազմվել է թիվ 118/26 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.6 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունիսի 2-ին թիվ 01/1569-2026 գրությամբ Սամվել Կարապետյանին ծանուցում է ուղարկվել, որ վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիման վրա 2026 թվականի հունիսի 23-ին ժամը՝ 15:00-ին, իրականացվելու է գործի քննություն: Ծանուցման հետ մեկտեղ վերջինիս ներկայացվել է նաև Օրենսգրքով սահմանված իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ծանոթացման թերթիկը, ինչպես նաև 118/26 ՎԻՎ արձանագրության օրինակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկվել է Սամվել Կարապետյանին, սակայն ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել այն ստանալու մասին հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով՝ ծանուցումը 2026 թվականի հունիսի 17-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում, որից հետո՝ հինգերորդ օրը, ծանուցումը համարվել է հանձնված (ստացված): Միաժամանակ, նշված ծանուցումը՝ 2026 թվականի հունիսի 17-ի թիվ 01/1813-2026 գրությամբ, ուղարկվել է ՀՀ Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին: Ի պատասխան նշված գրության՝ ՀՀ Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարը 2026 թվականի հունիսի 22-ի թիվ 31/81641-26 գրությամբ հայտնել է, որ թիվ 118/26 ՎԻՎ արձանագրության ծանուցագիրն առձեռն հանձնվել է հասցված 1 տնատիրության լիազոր անձ Արկադի Բալաբեկյանին՝ քաղաքացուն հանձնելու նպատակով: Թղթային ուղարկված ծանուցումը Հանձնաժողով է վերադարձվել 2026 թվականի հուլիսի 11-ին՝ չպահանջված նշումով (հիմք՝ [redacted] փոստային հետադարձ առաքանին, ետ վերադարձ՝ CN 15):

1.7 2026 թվականի հունիսի 23-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Սամվել Կարապետյանի ներկայացուցչի՝ Հայկուհի Նիկոլայանի (այսուհետ՝ Ներկայացուցիչ) ներկայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն, որի ընթացքում վերջինիս կողմից Հանձնաժողով է ներկայացվել միջնորդություն վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ՝ Սամվել Կարապետյանի կողմից ՀՀ բանկեր այցելելու հնարավորությունն ապահովելու նպատակով համապատասխան իրավասու մարմին դիմելու անհրաժեշտությունից ելնելով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրման ենթակա տվյալները պարունակում են բանկային գաղտնիք, ինչպես նաև առևտրային գաղտնիք, իսկ Սամվել Կարապետյանը, գտնվելով տնային կալանքի տակ, հնարավորություն չունի այցելել բանկ և անձամբ ձեռք բերել այդ տվյալները: Հանձնաժողովը բավարարել է միջնորդությունը և 2026 թվականի հունիսի 23-ին կայացրած թիվ ՎԻՎ/104/2026-1 որոշմամբ երկարաձգել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ժամկետը 10 օրով՝ հնարավորություն տալով Սամվել Կարապետյանին նշված ժամկետում դիմել վարույթն իրականացնող մարմնին՝ իր նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի պայմաններում ՀՀ բանկեր այցելելու հնարավորությունն ապահովելու և Հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ տվյալները ստանալու նպատակով: Միաժամանակ գործի քննության օր է նշանակվել 2026 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 15:00-ին:

1.8 2026 թվականի հուլիսի 2-ին Հանձնաժողովում մուտքագրվել է Ներկայացուցչի դիմում-միջնորդությունը (այսուհետ՝ Դիմում-միջնորդություն), որով վերջինս հայտնել է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի վարույթում

քննվող թիվ ՀԿԴ/0088/01/26 հակակոռուպցիոն քրեական գործով 2026 թվականի հունիսի 30-ին կայացած դատական նիստում քննարկվել է մեղադրյալներից միայն մեկի խափանման միջոցը, որի շրջանակներում հնարավորություն չի եղել քննության առարկա դարձնել մեղադրյալ Սամվել Կարապետյանին ՀՀ բանկեր այցելելու թույլտվություն տրամադրելու հարցը: Միաժամանակ, Ներկայացուցիչը հայտնել է, որ 2026 թվականի հուլիսի 7-ին և 9-ին թիվ ՀԿԴ/0088/01/26 քրեական գործով նշանակված են դատական նիստեր, որոնցից մեկում քննարկման առարկա է դառնալու նաև Սամվել Կարապետյանի խափանման միջոցի հարցը և հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ միջնորդել է հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ժամկետը երկարաձգել՝ ևս մեկ անգամ հնարավորություն տալով քրեական վարույթն իրականացնող մարմնի առջև քննարկման առարկա դարձնել սույն վարչական վարույթով կողմի պարտականությունների պատշաճ կատարման հարցը: Հանձնաժողովը բավարարել է ներկայացված Դիմում-միջնորդությունը և 2026 թվականի հուլիսի 2-ին կայացրած թիվ ՎԻՎ/104/2026-2 որոշմամբ երկարաձգել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ժամկետը ևս 10 օրով՝ հնարավորություն տալով Սամվել Կարապետյանին նշված ժամկետում դիմել վարույթն իրականացնող մարմնին՝ իր նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի պայմաններում ՀՀ բանկեր այցելելու հնարավորությունն ապահովելու և Հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ տվյալները ստանալու նպատակով: Միաժամանակ գործի քննության օր է նշանակվել 2026 թվականի հուլիսի 13-ին՝ ժամը 15:30-ին:

1.9 2026 թվականի հուլիսի 13-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Սամվել Կարապետյանի Ներկայացուցչի ներկայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները.

2.1 2026 թվականի հուլիսի 13-ին տեղի ունեցած գործի քննության ընթացքում Ներկայացուցիչը հայտնեց, որ նախորդիվ վարչական վարույթը երկարաձգվել էր՝ նպատակ ունենալով ապահովել թիվ ՀԿԴ/0088/01/26 քրեական վարույթն իրականացնող մարմնի, տվյալ դեպքում՝ Դատարանի հետ համաձայնեցնել Սամվել Կարապետյանի կողմից բանկեր այցելելու գործընթացը, ինչպես նաև դիտարկվել է վերջինիս նկատմամբ կիրառված խափանման միջոցի փոփոխության պայմաններում առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության բանկեր այցելելու հնարավորությունը, սակայն թիվ ՀԿԴ/0088/01/26 քրեական գործով 2026 թվականի հուլիսի 9-ին կայացած դատական նիստում Դատարանի (նախագահող դատավոր՝ Վ.Դոլմազյան) որոշմամբ Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանքի ժամկետը երկարաձգվել է երկու ամսով՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 18-ը ներառյալ:

Միաժամանակ, Ներկայացուցիչը հայտնեց, որ թեև Սամվել Կարապետյանի փաստաբան Արամ Վարդևանյանը դատական նիստի ընթացքում ներկայացրել է դիրքորոշում Հանձնաժողովի կողմից Սամվել Կարապետյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ, այնուամենայնիվ Դատարանը չի անդրադարձել Սամվել Կարապետյանի կողմից իր Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ բարձրացված հարցին, իսկ նախագահող դատավորի այն հարցին, թե արդյո՞ք առկա է պրակտիկա, երբ Հանձնաժողովի կողմից վարույթ է հարուցվել տնային կալանքի տակ գտնվող մարդու նկատմամբ, Արամ Վարդևանյանը ժխտողական պատասխան է հնչեցրել: Այսպիսով Դատարանը, թեև կատարել է նշված հարցադրումը, այնուամենայնիվ որոշմամբ չի անդրադարձել նշված հարցին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ներկայացուցիչը հայտնեց, որ գործի քննության օրվա դրությամբ Սամվել Կարապետյանի կողմից Հայտարարագիրն ամբողջությամբ լրացնելու մասով անհնարինությունը դեռևս առկա է:

Վերը նշվածի վերաբերյալ նիստը նախագահողը նշեց, որ քննարկվող՝ թիվ ՀԿԴ/0088/01/26 քրեական գործով դատական նիստը տեղի է ունեցել 2026 թվականի հուլիսի 9-ին, մինչդեռ 2026 թվականի հուլիսի 6-ին ուժի մեջ է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-239-Ն օրենքը, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածը լրացվել է 3.1-ին մասով, համաձայն որի՝ տնային կալանք խափանման միջոցը և այլ սահմանափակումները չեն տարածվում օրենքով նախատեսված պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման դեպքերի վրա, եթե դրանց չկատարումը կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Նիստը նախագահողը նշեց նաև, որը վերոնշյալ իրավակարգավորումից հետևում է, որ անձի նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցը, ինչպես նաև այլ սահմանափակումները իրավական առումով չեն կարող խոչընդոտել անձի կողմից պետության առջև ունեցած իր պարտականությունների պատշաճ իրականացմանը:

Միաժամանակ, նիստը նախագահողը նշեց, որ թիվ ՀԿԴ/0088/01/26 քրեական գործով 2026 թվականի հուլիսի 9-ին կայացած դատական նիստի ընթացքում (դատական նիստն առցանց հասանելի է եղել[1]) Սամվել Կարապետյանի փաստաբան Արամ Վարդևանյանը հայտնել է, որ Հանձնաժողովը նախկինում տնային կալանքի տակ գտնվող մարդու նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ չի հարուցել, ուստի անհրաժեշտ է փոխել Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցը, մինչդեռ նշված պնդումը չի համապատասխանում իրականությանը և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձինք ներկայացնում են հայտարարագիր բոլոր դեպքերում, այդ թվում՝ իրենց նկատմամբ կալանք կամ տնային կալանք խափանման միջոցները կիրառված լինելու դեպքերում, որի մասին Հանձնաժողովն արդեն իսկ հայտնել էր 2026 թվականի հունիսի 23-ին տեղի ունեցած գործի քննության ժամանակ: Միաժամանակ, Հանձնաժողովը հայտնել էր, որ

[1] Հասանելի՝ https://www.youtube.com/watch?v=n8zjX5WNW0k

գտնում է, որ անհրաժեշտ էր դիմել վարույթն իրականացնող մարմնին՝ Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի պայմաններում վերջինիս՝ անձամբ ՀՀ բանկեր այցելելու թույլտվություն տրամադրելու նպատակով: Հետևաբար, Արամ Վարդևանյանի վերոնշյալ մեկնաբանությունը տարբերվում է Հանձնաժողովի դիրքորոշումից:

Ներկայացուցիչը նաև հայտնեց, որ հակված է այն դիրքորոշմանը, որ տվյալ դեպքում առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված՝ վարչական վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը՝ պայմանավորված մինչև քրեական դատավարության կարգով ընթացող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը վարչական վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտ ընդունելու անհնարինությամբ: Ներկայացուցիչը հավելեց, որ թեև տվյալ դեպքում թիվ ՀԿԴ/0088/01/26 քրեական վարույթի ազդեցությունը թիվ ՎԻՎ/104/2026 վարչական վարույթի նկատմամբ դրսևորվում է անուղղակիորեն, այնուամենայնիվ այն խոչընդոտում է Սամվել Կարապետյանի կողմից իր պարտականությունների կատարմանը: Ներկայացուցիչը նշեց, որ ամեն դեպքում իր վստահորդի մոտ չկա հայտարարագիրը ներկայացնելուց խուսափելու դիտավորություն, այլ պարզապես առկա է իրական անհնարինություն: Իսկ հիշատակված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, Ներկայացուցիչը հայտնեց, որ տեղյակ չէ, սակայն տվյալ պահին հնարավոր չէ ներկայացնել պահանջվող հայտարարագիրը:

2.2 Ի պատասխան Հանձնաժողովի այն հարցին, թե արդյո՞ք Սամվել Կարապետյանի ներկայացուցիչը դիմել է վարույթն իրականացնող մարմնին՝ վերջինիս նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի պայմաններում ՀՀ բանկեր այցելելու թույլտվություն ստանալու նպատակով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովը վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին որոշումները կայացրել էր ելնելով Սամվել Կարապետյանին՝ իր նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի **պայմաններում** ՀՀ բանկեր այցելելու հնարավորությունն ապահովելու համար վարույթն իրականացնող մարմնին դիմելու հնարավորություն տալու անհրաժեշտությունից՝ Ներկայացուցիչը հայտնեց, որ քանի որ քրեական վարույթով ներգրավված չէ որպես Սամվել Կարապետյանի ներկայացուցիչ, տեղեկացված չէ նման միջնորդություն ներկայացված լինելու կամ չլինելու մասին:

Հանձնաժողովն ընդգծեց, որ ընթարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողովի դիրքորոշումը կայանում էր նրանում, որ եթե անգամ Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցը փոխվեր, ապա վերջինս չէր հասցնի սահմանված ժամկետում՝ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը ներկայացնել Հայտարարագիրը: Ուստի, այդ հանգամանքով պայմանավորված՝ Հանձնաժողովը երկու անգամ երկարաձգել էր վարույթի ժամկետը՝ տնային կալանք խափանման միջոցի պայմաններում Հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ տվյալները ստանալու նպատակով ՀՀ բանկեր այցելելու հնարավորությունն ապահովելու համար Սամվել Կարապետյանին վարույթն իրականացնող մարմնին դիմելու հնարավորություն տալով:

Վերը նշվածի առնչությամբ Ներկայացուցիչը հայտնեց, որ եթե անգամ Սամվել Կարապետյանի ներկայացուցիչները բրեական վարույթի շրջանակներում չեն դիմել վարույթն իրականացնող մարմնին՝ Սամվել Կարապետյանին ՀՀ բանկեր այցելելու հնարավորություն ընձեռելու համար, ապա դրա համար կարող է պատճառ հանդիսանալ այն հանգամանքը, որ բրեական վարույթի շրջանակներում նախկինում Սամվել Կարապետյանի ներկայացուցիչները դիմել են վարույթն իրականացնող մարմնին՝ Սամվել Կարապետյանին հոր շիրիմին այցելելու համար թույլտվություն տրամադրելու նպատակով, սակայն մերժվել են: Ի պատասխան նշված փաստարկին՝ Հանձնաժողովը շեշտեց, որ դրանք տարբեր իրավիճակներ են և չեն նույնանում, քանի որ Ներկայացուցչի կողմից նշված դեպքում Սամվել Կարապետյանին թույլտվություն տրամադրելը վերջինիս համար կարող է մի շարք անձանց հետ շփում ունենալու հնարավորություն ստեղծել, իսկ Հանձնաժողովի կողմից պահանջվող Հայտարարագիրը լրացնելու նպատակով ՀՀ բանկեր այցելելու համար թույլտվությունը կապված է անձի՝ օրենքով նախատեսված պարտականության կատարման հետ և նման միջնորդությունը հնարավորություն կստեղծեր Սամվել Կարապետյանի կողմից իր պարտականությունը կատարելու համար, հետևաբար դրանք չեն նույնանում:

Ներկայացուցիչը նաև հայտնեց, որ դատական նիստի ընթացքում Սամվել Կարապետյանի ներկայացուցիչների կողմից բարձրացվել է վերջինիս՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրելու վերաբերյալ հարցը, սակայն Ներկայացուցչի գնահատմամբ, թեև կիրառված խափանման միջոցը չի փոխվել, այնուամենայնիվ, Դատարանը թերահավատորեն է մոտեցել այն հանգամանքին, թե արդյոք հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը տնային կալանք խափանման միջոցի հետ կարող է խաչվել, թե ոչ: Նշվածին ի պատասխան՝ Հանձնաժողովը կրկին ընդգծեց, որ կիրառված խափանման միջոցը փոխելը և տնային կալանք խափանման միջոցի պայմաններում բանկ այցելելու թույլտվություն տրամադրելը տարբեր ընթացակարգեր են նախատեսում և չեն նույնանում:

2.3 Հանձնաժողովը, անդրադառնալով հայտարարագրման ենթակա տվյալները ներկայացնելու նպատակով Սամվել Կարապետյանի կողմից անձամբ ՀՀ բանկեր այցելելու և բանկային գաղտնիք և առևտրային գաղտնիք պարունակող տվյալները ձեռք բերելու անհնարինությանը, նշեց, որ բանկերը բանկային հաշիվների վերաբերյալ քաղվածքները ամսական պարբերականությամբ ուղարկում են հաճախորդի էլեկտրոնային փոստին, ինչպես նաև քաղվածքները ներբեռնելու հնարավորություն են ընձեռում բանկերի բջջային հավելվածները կամ դրանց առցանց տարբերակները, և եթե որոշակի հանգամանքների պայմաններում բացակայում է հասանելիությունը նշված հավելվածներին, ապա անձը հնարավորություն ունի լիազորագրի միջոցով՝ անուղղակիորեն կամ, հեռախոսազանգի միջոցով նույնականացվելով, ձեռք բերել հասանելիություն բջջային հավելվածներին կամ ուղղակիորեն բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին ստանալ անհրաժեշտ տվյալները:

Անդրադառնալով լիազորագրի միջոցով հայտարարագրման ենթակա տվյալները ձեռք բերելու վերաբերյալ Ներկայացուցչի կողմից ներկայացված այն փաստարկին, որ Սամվել Կարապետյանը չի ցանկանում այլ անձի միջոցով ձեռք բերել այդ տվյալները՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ այդ տվյալները հրապարակային են և հասանելի են դառնալու հանրությանը, առաջարկեց Ներկայացուցչին ներկայացնել պարզաբանում նշված հարցի վերաբերյալ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ներկայացուցիչը վերահաստատեց, որ հայտարարագրերը ներկայացնելու անհնարինությունը պայմանավորված է միայն իր վստահորդի՝ հայաստանյան բանկերում գտնվող բանկային հաշիվների տվյալներին հասանելիության բացակայությամբ, Հանձնաժողովն առաջարկեց նաև պարզաբանել, թե արտասահմանյան բանկերում վերջինիս ունեցած բանկային հաշիվների տվյալներն ինչ եղանակով են պատրաստվում ձեռք բերել:

Ներկայացուցիչը վերը նշվածի վերաբերյալ հայտնեց, որ չի տիրապետում տեղեկատվության այն մասին, թե Սամվել Կարապետյանն ինչպես է նախատեսում ձեռք բերել արտասահմանյան բանկերում իր ունեցած բանկային հաշիվների տվյալները, իսկ հայտարարագրման ենթակա տվյալների հրապարակայնության վերաբերյալ, նշեց, որ հրապարակման ենթակա տվյալների և լիազորագրի միջոցով այլ անձի կողմից ձեռք բերման ենթակա տվյալների ծավալը և բովանդակությունը տարբեր են, քանի որ բանկերի անվանումների, հաշվեհամարների քանակի, շարժերի մասին և այլ տվյալները չեն հրապարակվում:

Բջջային հավելվածների վերաբերյալ Ներկայացուցիչը հայտնեց, որ չի տիրապետում այն տեղեկատվությանը, թե արդյոք Սամվել Կարապետյանը տիրապետում է այդ հավելվածներին, միաժամանակ նշեց, որ ելնելով իր փորձից կարծում է, որ ՀՀ բանկերի մեծամասնությունը պահանջում է անձի ներկայությունը նշված հավելվածներն ակտիվացնելու նպատակով նոր սարք գրանցելու և այլ գործողություններ կատարելու համար:

2.4 Նիստը նախագահողը, ճշտելով, որ Ներկայացուցիչն այլ պարզաբանումներ չունի, հայտնեց իր դիրքորոշումը սույն գործով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված՝ վարչական վարույթը կասեցնելու հիմքերի առկայության վերաբերյալ Ներկայացուցչի դիրքորոշման մասին: Մասնավորապես, նիստը նախագահողն արձանագրեց, որ բարձրացված հարցը՝ թե որքանով է թիվ ՀԿԴ/0088/01/26 քրեական վարույթն ազդում թիվ ՎԻՎ/104/2026 վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի վրա, պետք է դիտարկել առկա իրավական կարգավորումների լույսի ներքո: Նշվեց, որ թեև կարող է փոխկապակցվածություն լինել, այնուամենայնիվ վերոնշյալ իրավակարգավորումը չի վերաբերում սույն դեպքին և Ներկայացուցչի դիրքորոշումը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցնելու անհրաժեշտության առկայության մասին ողջամիտ կլիներ այն դեպքում, երբ քրեական վարույթի անմիջական առարկան լիներ հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը:

Հանձնաժողովը հաստատեց, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցնելու հնարավորությունը բացակայում է, և Ներկայացուցիչը հայտնեց, որ գտնում է, որ տվյալ դեպքում այլևս ժամանակավրեպ և անիմաստ է ներկայացնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցնելու մասին իր գրավոր դիմում-միջնորդությունը, այնուամենայնիվ տրամադրեց այն՝ գործին կցելու նպատակով:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/104/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Սամվել Կարապետյանը 2026 թվականի փետրվարի 27-ից մինչ օրս հանդիսանում է «ՈՒԺԵՂ ՀԱՑԱՍՏԱՆ» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ, նույն կուսակցության նախագահ:

3.2 «ՈՒԺԵՂ ՀԱՑԱՍՏԱՆ» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանը Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.3 Սամվել Կարապետյանի կողմից Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Թիվ ՀԿԴ/0088/01/26 հակակոռուպցիոն քրեական գործով Դատարանի կողմից 2026 թվականի ապրիլի 17-ին կայացրած որոշմամբ Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանքի ժամկետը երկարածգվել է երկու ամսով՝ մինչև 2026 թվականի հուլիսի 18-ը ներառյալ: Դատարանի կողմից 2026 թվականի հուլիսի 9-ին կայացրած որոշմամբ Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանքի ժամկետը երկարածգվել է ևս երկու ամսով՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 18-ը ներառյալ:

3.5 Հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 23-ին և հուլիսի 2-ին կայացրած՝ համապատասխանաբար թիվ ՎԻՎ/104/2026-1 և ՎԻՎ/104/2026-2 որոշումներով երկարածգել է Սամվել Կարապետյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը՝ յուրաքանչյուր դեպքում 10 օրով՝ հնարավորություն տալով Սամվել Կարապետյանին իր նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի պայմաններում ՀՀ բանկեր այցելելու հնարավորությունն ապահովելու համար վարույթն իրականացնող մարմնին դիմելու և Հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ տվյալները ստանալու նպատակով:

3.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա դրությամբ Սամվել Կարապետյանի Հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները**, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ՝ նաև հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր (...):

4.2 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, (...):

4.4 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.5 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (2026 թվականի հուլիսի 6-ից հետո գործող խմբագրության) 123-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տնային կալանք կիրառելու մասին դատարանի որոշման մեջ նշվում են այն կոնկրետ սահմանափակումները, որոնք տարածվում են մեղադրյալի վրա, ինչպես նաև իրավասու այն մարմինը, որին հանձնարարվում է այդ սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունը: Հեռախոսային խոսակցություններ ունենալու արգելքը չի տարածվում շտապ բժշկական օգնություն, իրավապահ մարմիններ կամ արտակարգ իրավիճակներում փրկարար ծառայություն կանչելու, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող մարմնի հետ կապ հաստատելու դեպքերի վրա: Այդ մասին մեղադրյալն անհապաղ տեղեկացնում է վերահսկողություն իրականացնող մարմնին:

4.7 Նույն հոդվածի 3.1-ին մասի համաձայն՝ 123-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում օրենքով նախատեսված պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման դեպքերի վրա, եթե դրանց չկատարումը կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն: Այդ գործողությունների իրականացման մասին մեղադրյալն անհապաղ տեղեկացնում է վերահսկողություն իրականացնող մարմնին:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը, բացառությամբ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող իրավահարաբերություններից բխող, այդ թվում՝ օտարվող կամ օտարված գույքի կամ դրա նկատմամբ ձեռքբերողի սեփականության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ վարչական ակտերի վերաբերյալ քննվող գործերի:

4.12 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.13 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.15 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշմանը Հանձնաժողովն արձանագրում է.

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանը, Սահմանադրական օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, կրել է Հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն, սակայն Օրենքով նախատեսված Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա Հանձնաժողով չի ներկայացրել, այն է՝ թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը:

Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը: Տվյալ դեպքում պարզվել է, որ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Սամվել Կարապետյանը 2026 թվականի փետրվարի 27-ից մինչ օրս հանդիսանում է «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության նախագահ, հետևաբար՝ Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 2-ին մասի համաձայն հանդիսացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի

ապահովել Կուսակցությունների գործունեության թափանցիկության ամբողջականությունը և բացառելու կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի առանձին անդամներին ֆինանսավորելու միջոցով կամ նրանց անունով գույքի ձեռակերպման միջոցով կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները շրջանցելը՝ այդպիսով ապահովելով կուսակցությունների գործունեության ֆինանսական թափանցիկությունը և վերջիններիս անկախությունը մասնավոր շահերից:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ դեպքում, «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանը, Սահմանադրական օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, կրել է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի 2026 թվականի պաշտոնական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն, սակայն վերջինս, օրենքով սահմանված ժամկետում, այն է՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելուն հաջորդող 30 օրվա ընթացքում, ինչպես նաև դրանից հետո Հանձնաժողովի գրավոր ծանուցմամբ տրամադրված 30-օրյա ժամկետում և դրանից հետո նախաձեռնված վարչական վարույթի ընթացքում՝ մինչև գործի քննության օրը, չի ներկայացրել Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ խաթարվել է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը:

Ներկայացուցչի՝ սույն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցնելու հնարավորության մասին դիտարկման առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված հիմքը վերաբերում է այն դեպքերին, երբ առկա է ուղիղ կապ սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործի և տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի, վերջիններիս առարկաների միջև:

Վարչական վարույթի կասեցման՝ վերոնշյալ իրավական հիմքն առկա կլիներ այն դեպքում, եթե քրեական վարույթի անմիջական առարկան լիներ հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիրը չներկայացնելը, և այդ վարույթով պարզման ենթակա փաստերը հանդիսանային վարչական վարույթի շրջանակներում գնահատման ենթակա փաստեր:

Սույն գործով ձեռք բերված տվյալներով հաստատվել է, որ թիվ ՀԿԴ/0088/01/26 հակակոռուպցիոն քրեական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից 2026 թվականի ապրիլի 17-ին կայացրած որոշմամբ Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանքի ժամկետը երկարաձգվել է երկու ամսով՝ մինչև 2026

թվականի հուլիսի 18-ը ներառյալ: Նույն դատարանի կողմից 2026 թվականի հուլիսի 9-ին կայացրած որոշմամբ Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանքի ժամկետը երկարածգվել է ևս երկու ամսով՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 18-ը ներառյալ:

Վերը նշվածի առնչությամբ Հանձնաժողովն ընդգծում է, որ թեև թիվ ՀԿԴ/0088/01/26 քրեական վարույթի և թիվ ՎԻՎ/104/2026 վարչական վարույթի միջև առկա է որոշակի անուղղակի կապ՝ քրեական վարույթի շրջանակներում Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի և այդ խափանման միջոցի պայմաններում Սամվել Կարապետյանի՝ Հայտարարագիրը ներկայացնելու համար անհրաժեշտ տվյալները ձեռք բերելու նպատակով գործողություններ իրականացնելու խոչընդոտների միջև, այնուամենայնիվ, քրեական գործով կայացվելիք դատական ակտը չի հանդիսանում վարչական վարույթի շրջանակներում վարչական ակտի ընդունման անհրաժեշտ նախապայման, վարույթները վերաբերում են տարբեր առարկաների հիմքով հարուցված գործերի, և Հանձնաժողովը հնարավորություն ունի առկա ապացույցների ու կիրառելի իրավական նորմերի հիման վրա ինքնուրույն իրականացնել վարչարարությունը և ընդունել համապատասխան վարչական ակտ: Այլ կերպ ասած՝ երկու վարույթների միջև առկա որոշակի անուղղակի կապը բավարար չէ եզրակացնելու համար, որ մինչև քրեական վարույթի ավարտը Հանձնաժողովը զրկված է իր իրավասությունների շրջանակում վարչական ակտ ընդունելու հնարավորությունից:

Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում բացակայում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված՝ վարչական վարույթը կասեցնելու հիմքերը:

Միաժամանակ հարկ է նշել, որ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու, գործի քննարկման համար էական համարվող բոլոր հանգամանքները պարզելու, ինչպես նաև անձի իրավունքների արդյունավետ իրացմանը նպաստելու նպատակով Հանձնաժողովը, բավարարելով Ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունները, երկու անգամ երկարածգել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ժամկետը՝ հնարավորություն ընձեռելով Սամվել Կարապետյանին դիմելուքրեական վարույթն իրականացնող մարմնին՝ **իր նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի պայմաններում ՀՀ բանկեր այցելելու հնարավորությունն ապահովելու և Հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ տվյալներն անձամբ ձեռք բերելու նպատակով**: Հետևաբար, Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակներում ձեռնարկել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզմանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները և սպառել է այդ նպատակով իրեն վերապահված իրավական հնարավորությունները:

Ինչ վերաբերում է գործի քննության ընթացքում Ներկայացուցչի կողմից նշված այն հանգամանքին, որ թիվ ՀԿԴ/0088/01/26 հակակոռուպցիոն քրեական գործով 2026 թվականի հուլիսի 9-ին հրավիրված դատական նիստի

ժամանակ Սամվել Կարապետյանի փաստաբան Արամ Վարդևանյանը հերքել է Հանձնաժողովի կողմից տնային կալանքի տակ գտնվող անձի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու պրակտիկայի առկայությունը, ապա Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ վարչական վարույթ է հարուցվում բոլոր այն դեպքերում, երբ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը: Հետևաբար, անձի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու փաստը պայմանավորված չէ նրա նկատմամբ դատարանների կողմից որևէ խափանման միջոց կամ այլ սահմանափակումներ կիրառված լինելու հանգամանքով: Վարչական վարույթի հարուցման իրավական հիմքը բացառապես Օրենքով տվյալ անձի վրա դրված պարտականության և այն Օրենքով սահմանված ժամկետում կատարված չլինելու փաստի առկայությունն է: Ընդ որում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ 2026 թվականի մայիսի 11-ի թիվ ՎԻՎ/75/2026 վարչական ակտը ևս կայացվել է դատարանի կողմից անձի նկատմամբ տնային կալանք խափանման միջոցը կիրառված լինելու ժամանակահատվածում այդ անձի նկատմամբ Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի արդյունքում:

Վերոգրյալի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ 2026 թվականի հուլիսի 6-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-239-Ն օրենքը, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածը լրացվել է 3.1-ին մասով, համաձայն որի՝ **«Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում օրենքով նախատեսված պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման դեպքերի վրա, եթե դրանց չկատարումը կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն**: Այդ գործողությունների իրականացման մասին մեղադրյալն անհապաղ տեղեկացնում է վերահսկողություն իրականացնող մարմնին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև 2026 թվականի հուլիսի 6-ը գործող խմբագրության իրավակարգավորումների պայմաններում տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալն իր նկատմամբ կիրառված սահմանափակումների պատճառով կարող էր զրկվել օրենքով իր վրա դրված պարտականությունների կատարման հնարավորությունից, մասնավորապես այն պարտականությունների, որոնց կատարման համար անհրաժեշտ է ունենալ նամակագրություն կամ օգտվել հաղորդակցության միջոցներից: Նման պայմաններում մեղադրյալի կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված պարտականությունների չկատարումը որոշ դեպքերում կարող էր հանգեցնել օրենքով նախատեսված պատասխանատվության: Մինչև վկայակոչված օրենսդրական փոփոխության ուժի մեջ մտնելը գործող իրավակարգավորումների պայմաններում հաղորդակցության սահմանափակումները կարող էին փաստացի անհնարին դարձնել նման պարտականությունների (այդ թվում՝ Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականության) կատարումը և առաջացնել վարչական պատասխանատվություն կամ այլ հետևանքներ:

Վկայակոչված օրենսդրական փոփոխության նպատակը հենց նման իրավիճակները, մասնավորապես, տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալին՝ իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված պարտականությունների չկատարման հետևանքով օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելու դեպքերը բացառելն է:

Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-239-Ն օրենքն ունի անցումային դրույթ, համաձայն որի՝ այն տարածվում է նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը վարույթ ստանձնած գործերի քննության վրա: Հետևաբար, օրենսդիրն ինքն է նախատեսել նշված իրավակարգավորման կիրառելիությունը նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը հարուցված և քննության փուլում գտնվող վարույթների նկատմամբ, ինչից ուղղակիորեն բխում է, որ այն տարածվում է նաև թիվ ՀԿԴ/0088/01/26 հակակոռուպցիոն քրեական գործի քննության վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 3.1-ին մասն ուժի մեջ մտնելուց հետո տնային կալանքով պայմանավորված սահմանափակումներն ինքնին չեն կարող դիտարկվել որպես օրենքով սահմանված այնպիսի պարտականությունների կատարման խոչընդոտ, որոնց չկատարումը կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն: Հետևաբար, գործող իրավակարգավորման պայմաններում Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանքը չէր կարող խոչընդոտել վերջինիս՝ Օրենքով իր վրա դրված հայտարարագիր ներկայացնելու պարտականության կատարմանը, քանի որ այդ պարտականության կատարմանն ուղղված գործողությունները դուրս են տնային կալանքով նախատեսված սահմանափակումների ծավալից:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովն ընդգծում է, որ մինչև վերոնշյալ օրենսդրական փոփոխությունն ուժի մեջ մտնելը, Հանձնաժողովն արդեն իսկ երկու անգամ երկարաձգել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ժամկետը՝ հնարավորություն ընձեռելով Սամվել Կարապետյանին դիմելու քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ իր նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի պայմաններում ՀՀ բանկեր այցելելու հնարավորությունն ապահովելու և Հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ տվյալներն անձամբ ձեռք բերելու նպատակով: Հետևաբար, Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակներում ձեռնարկել էր բոլոր ողջամիտ և հնարավոր միջոցները՝ նպաստելու Սամվել Կարապետյանի կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականության կատարման համար անհրաժեշտ տվյալներն անձամբ ձեռք բերելու հնարավորության իրացմանը՝ այդ նպատակով սպառելով իրեն վերապահված իրավական բոլոր հնարավորությունները:

Ընդ որում, Հանձնաժողովը ևս մեկ անգամ ընդգծում է, որ Սամվել Կարապետյանի՝ Հայտարարագիր ներկայացնելու պարտականությունն իրականացնելու նպատակով բանկեր այցելելու և տվյալներ ձեռք բերելու համար անհրաժեշտ չէ խափանման միջոցի փոփոխություն, այդ նպատակին կարելի է հասնել նաև Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի պայմաններում բանկեր այցելելու համար

թույլտվություն ստանալու նպատակով վարույթն իրականացնող մարմնին դիմելու միջոցով: Այդ հանգամանքը շեշտվել է նաև Հանձնաժողովի կողմից սույն գործով վարույթի ժամկետի երկարաձգման մասին որոշումներով: Ընդ որում, Հանձնաժողովին հայտնի չէ Սամվել Կարապետյանի կամ վերջինիս ներկայացուցիչների կողմից համապատասխան գործողություններ ձեռնարկելու մասին որևէ տվյալ, իսկ Ներկայացուցչի կողմից վկայակոչված՝ 2026 թվականի հուլիսի 9-ին տեղի ունեցած դատական նիստը վերաբերել է Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի փոփոխությանը:

Ինչ վերաբերում է վարույթի մասնակցի այն պնդմանը, որ վերջինս չի ցանկացել լիազորագրի միջոցով այլ անձի ներգրավմամբ ստանալ բանկային տվյալները, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ «ցանկության բացակայությունը» չի կարող դիտարկվել որպես պարտականության կատարման օբյեկտիվ անհնարինություն: Օրենսդրությունը նախատեսում է ներկայացուցչության ինստիտուտը հենց նմանատիպ իրավիճակներում անձի իրավունքների իրացումն ու պարտականությունների կատարումն ապահովելու համար: Նման պայմաններում, օրենքով նախատեսված իրավական գործիքակազմից (ներկայացուցչի միջոցով գործելու հնարավորությունից) գիտակցաբար չօգտվելու պայմաններում չի կարող հիմնավորվել պարտականության կատարման օբյեկտիվ անհնարինությունը: Այս համատեքստում, Հանձնաժողովն էական է համարում նաև այն հանգամանքը, որ սույն վարույթի ընթացքում Սամվել Կարապետյանի և նրա ներկայացուցիչների կողմից Հանձնաժողով չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ դիմել են բրեական վարույթն իրականացնող մարմնին (դատարանին)՝ տնային կալանքի պայմաններում հայտարարագրման պարտականությունը կատարելու համար բանկ այցելելու կամ այլ ձևով տվյալներ ստանալու թույլտվություն հայցելու միջնորդությամբ և մերժվել են: Չդիմելով իրավասու մարմնին համապատասխան թույլտվության հայցով՝ Սամվել Կարապետյանը չի դրսևորել պատշաճ ջանասիրություն՝ առկա իրավական հնարավորությունների սահմաններում իր առջև Օրենքով դրված պարտականությունը կատարելու ուղղությամբ:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ Սամվել Կարապետյանի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ Վարչական դատարան)՝ Հանձնաժողովին որոշակի գործողություններ կատարելուն, այն է՝ Սամվել Կարապետյանի կողմից կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացման առնչությամբ հարուցված վարչական վարույթը մինչև վերջինիս նկատմամբ բրեական վարույթով կիրառված սահմանափակումների ամբողջությամբ վերացումը կասեցնելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Վարչական դատարանը 2026 թվականի ապրիլի 30-ին կայացրած որոշմամբ ներկայացված հայցադիմումը վերադարձրել է հետևյալ հիմնավորմամբ. «Դատարանը նկատում է, որ թեպետ հայցապահանջում հստակեցված չէ բրեական վարույթը, այդուհանդերձ հայցադիմումով վկայակոչվել է և հայցադիմումին կից ներկայացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի թիվ ՀԿԴ/0194/06/25 գործով 14.03.2026 թվականի որոշումը (2 էջ), որի

համաձայն՝ թիվ 83133225 բրեակաև վարույթով մեղադրյալ Սամվել Կարապետյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց կիրառված տնային կալանքի ժամկետը երկարաձգվել է 1 ամսով, մինչդեռ պահանջով վարույթի կասեցման ժամկետը Հայցվորը պայմանավորում է բրեակաև վարույթով կիրառված սահմանափակումների ամբողջությամբ վերացմամբ, հետևաբար եթե Հայցվորը հայցապահանջով ի նկատի է ունեցել թիվ 83133225 բրեակաև վարույթը, ապա հայցադիմումը ներկայացնելու պահին Դատարանի համար պարզ չէ, թե թիվ 83133225 բրեակաև վարույթն ինչ ընթացք ունի՝ հաշվի առնելով, որ 14.03.2023 թվականի որոշմամբ երկարաձգված խափանման միջոցի ժամկետն արդեն իսկ ավարտված է: Հետևաբար հայցադիմումը կրկին ներկայացնելու պարագայում անհրաժեշտ է համալրել ոչ բավարար փաստական տվյալները՝ ներկայացնելով թիվ 83133225 բրեակաև վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:»:

Հայցադիմումը, կրկին ներկայացվելուց հետո, Վարչական դատարանի 2026 թվականի մայիսի 20-ի թիվ ՎԴ/6674/05/26 որոշմամբ վարույթ է ընդունվել, սակայն նույն օրը կայացված որոշմամբ Վարչական դատարանը մերժել է թիվ ՎԴ/6674/05/26 գործով Սամվել Կարապետյանի ներկայացուցչի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը հետևյալ հիմնավորմամբ. «Դատարանը գտնում է, որ միջնորդությամբ չեն ներկայացվել բավարար և համոզիչ փաստարկներ առ այն, որ հայցի ապահովման միջոց չկիրառելու պայմաններում հնարավոր դատական ակտի կատարումը կդառնա անհնարին կամ էապես կդժվարանա, էական վնաս կհասցվի միջնորդություն ներկայացնող անձին:

Մասնավորապես, Հայցվորի ներկայացուցչի կողմից վկայակոչված հանգամանքները կրում են ենթադրական բնույթ և չեն հիմնավորում, որ պատասխանողի կողմից հնարավոր վարչական ակտի ընդունումն ինքնին կհանգեցնի Հայցվորի իրավունքների անվերականգնելի խախտման կամ հետագայում կայացվելիք դատական ակտի կատարման անհնարինության: Ընդ որում, վարչական պատասխանատվության վերաբերյալ հնարավոր ակտի ընդունումն ինքնին չի բացառում դրա հետագա դատական վիճարկման հնարավորությունը և չի զրկում Հայցվորին արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից: Բացի այդ, միջնորդությամբ չի հիմնավորվել, թե ինչու է պատասխանողի կողմից վարչական վարույթի բնականոն ընթացքի սահմանափակումը համաչափ և անհրաժեշտ միջոց տվյալ իրավիճակում:»:

Վերոգրյալի կապակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ, թեև հայցադիմումը կրկին ներկայացվելուց հետո այն ընդունվել է վարույթ, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման հիմքում ընկած՝ Սամվել Կարապետյանի նկատմամբ հարուցված բրեակաև վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկություններն ու համապատասխան ապացույցները ներկայացված չլինելու փաստական հանգամանքները վերացվել են, այնուամենայնիվ Վարչական դատարանը, գնահատելով հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությամբ ներկայացված փաստարկները, եկել է այն եզրակացության, որ դրանք բավարար և

համոզիչ չեն եղել՝ հիմնավորելու, որ հայցի ապահովման միջոց չկիրառելու պայմաններում հնարավոր դատական ակտի կատարումը կդառնա անհնարին կամ էապես կդժվարանա:

Հանձնաժողովն ընդգծում է, որ կուսակցության ղեկավար մարմնի անդամների կողմից գույքի և եկամուտների հայտարարագրումն ունի կարևորագույն հանրային-իրավական նշանակություն՝ ուղղված կոռուպցիայի կանխարգելմանը և կուսակցությունների ֆինանսական թափանցիկության ապահովմանը: Այս համատեքստում մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքները բացարձակ չեն և կարող են սահմանափակվել՝ հանուն գերակա հանրային շահի: Ընդ որում, քանի որ քննարկվող հայտարարագրման ենթակա տվյալներն (սույն դեպքում դրամական միջոցները) օրենքով սահմանված կարգով հանդիսանում են հրապարակային (հանրությանը հասանելի) տվյալներ, դրանց գաղտնիության աստիճանը կուսակցության պաշտոնատար անձանց համար զգալիորեն նվազեցված է: Օրենսդիրն այսպիսով սահմանել է համաչափ հավասարակշռություն, համաձայն որի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ֆինանսական թափանցիկության նկատմամբ հանրային վերահսկողության շահը գերակայում է մասնավոր կյանքի գաղտնիության նկատմամբ: Ուստի, հայտարարագիր չներկայացնելը չի կարող արդարացվել անձնական կամ բանկային տվյալների գաղտնիության պահպանման նկատառումներով, քանի որ պաշտոնական պարտականություններն ստանձնելիս անձը գիտակցաբար համաձայնվել է իրավունքների նման սահմանափակումներին և իր վրա է վերցրել հանրության առջև հաշվետու լինելու բարձր պարտավորությունը:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Սահմանադրական օրենքի համաձայն՝ կուսակցությունն իր հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակման կամ պաշտոնից ազատման մասին տեղեկությունները Հանձնաժողով է ներկայացնում համապատասխան իրավական ակտի ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում: Տվյալ դեպքում, թեև Սամվել Կարապետյանը պաշտոնն ստանձնել է 2026 թվականի փետրվարի 11-ին, իսկ պետական գրանցումը կատարվել է 2026 թվականի փետրվարի 27-ին, Կուսակցության կողմից համապատասխան ծանուցումը Հանձնաժողով է ներկայացվել միայն 2026 թվականի մարտի 18-ին՝ օրենքով սահմանված եռօրյա ժամկետի խախտմամբ (ուշացումով): Սույն փաստն ունի էական նշանակություն գործի քննության համար, քանի որ այն վկայում է, որ Սամվել Կարապետյանը փաստացի ավելի երկար ժամանակահատված է ունեցել իր իրավունքների ու պարտականությունների իրացման նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար: Բացի այդ, Հանձնաժողովը հարկ է համարում շեշտել, որ կուսակցության նախագահի պաշտոնում առաջադրվելու և ընտրվելու պահին Սամվել Կարապետյանն արդեն իսկ գտնվել է տնային կալանքի տակ: Հետևաբար, վերջինս, հանդիսանալով քաղաքական ուժի ղեկավար, իրավական և փաստացի առումով պարտավոր էր և կարող էր ողջամտորեն կանխատեսել ու գիտակցել իր կարգավիճակից բխող հանրային-իրավական պարտականությունների (այդ թվում՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականության) առաջացումը և դրանց կատարման կարգն ու պայմանները իր նկատմամբ կիրառված

սահմանափակումների համատեքստում: Նման պայմաններում պաշտոնի ստանձնումը ենթադրում է, որ անձը գիտակցաբար ստանձնել է նաև այդ պարտականությունները կատարելու պատասխանատվությունը, իսկ դրանց չկատարումը չի կարող արդարացվել նախապես հայտնի խափանման միջոցի առկայությամբ:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ ձևավորված վարչական պրակտիկայի համաձայն՝ նախկինում հարուցված համանման վարույթներով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող այլ անձինք, գտնվելով անգամ ազատազրկման վայրերում կամ կալանքի տակ, պատշաճ կերպով կատարել են օրենքով սահմանված իրենց պարտականությունը (այդ թվում՝ թղթային եղանակով հայտարարագիր ներկայացնելու միջոցով): Նշված անձանց պարտականությունների պատշաճ կատարումը փաստում է, որ կիրառված խափանման միջոցները ու սահմանափակումները օբյեկտիվորեն չեն բացառում հայտարարատուի կողմից օրենքի պահանջների կատարումը, և սույն գործով ներկայացվող առարկությունները չեն կարող հիմք հանդիսանալ Սամվել Կարապետյանին վարչական պատասխանատվությունից ազատելու համար:

Ամփոփելով և գնահատելով արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու որակական կողմը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ մինչև սույն գործով գործի քննության ավարտը Հանձնաժողով են ներկայացվել կոնկրետ Սամվել Կարապետյանի Հայտարարագրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցումներ, ինչպես նաև առկա են եղել համապատասխան զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներ: Սույն փաստն ակնհայտորեն վկայում է տվյալ հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության և եկամուտների նկատմամբ հանրային բարձր հետաքրքրվածության մասին: Նման պայմաններում, Սամվել Կարապետյանի կողմից Հայտարարագիրը սահմանված ժամկետներում և կարգով չներկայացնելը հանգեցրել է հանրության՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ֆինանսական միջոցների թափանցիկության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքի անմիջական սահմանափակմանը և ուղղակիորեն խաթարել է հայտարարագրման համակարգի նկատմամբ հանրային վստահությունը՝ վնաս պատճառելով պետության կողմից հետապնդվող հակակոռուպցիոն քաղաքականության նպատակներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանը ենթակա է վարչական պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԻՎ/104/2026 որոշմամբ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի 2026 թվականի պաշտոնական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Սամվել Սարգսի Կարապետյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական **900005001335** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին*** վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Սարգսի Կարապետյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**